# NCWA FOUNDING MEMBER ELECTED DIRECTOR AT GENOCIDE MUSEUM

*Posted on September 17, 2018 by Keghart*

**Category:** Opinions

17 September 2018

Harutyun Marutyan, a professor at the Academy of Sciences of Armenia and a founding member of the National Congress of Western Armenians, has been elected director of the Institute and Museum of Genocide of Armenians. Prof. Marutyan has a D. SC. (History) on social anthropology from the Institute of Archeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia and a Ph.D. in cultural anthropology. He is the author, co-author, and editor of several books. Marutyan has also received many awards. **Congratulations to Prof. Marutyan.**

**Հարություն Մարությանը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն**

**Գայանե Դանիելյան**, Ազատություն Ռադիոկայան, Սեպտեմբեր 14, 2018

Հարություն Մարությանը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն

Այսօր կայացած ընտրությունների արդյունքում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն է ընտրվել Հարություն Մարությանը: Նա հանդիսանում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

17 September 2018

Harutyun Marutyan, a professor at the Academy of Sciences of Armenia and a founding member of the National Congress of Western Armenians, has been elected director of the Institute and Museum of Genocide of Armenians. Prof. Marutyan has a D. SC. (History) on social anthropology from the Institute of Archeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia and a Ph.D. in cultural anthropology. He is the author, co-author, and editor of several books. Marutyan has also received many awards. **Congratulations to Prof. Marutyan.**

**Հարություն Մարությանը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն**

**Գայանե Դանիելյան**, Ազատություն Ռադիոկայան, Սեպտեմբեր 14, 2018

Հարություն Մարությանը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն

Այսօր կայացած ընտրությունների արդյունքում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն է ընտրվել Հարություն Մարությանը: Նա հանդիսանում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

Այս մասին «Ազատությանը» հայտնեցին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից:

ՀՑԹԻ-ն նախկինում ղեկավարել է պատմաբան Հայկ Դեմոյանը: Վերջինս մեկ տարի առաջ տևական ժամանակով մեկնել էր Հայաստանից՝ Հարվարդի համալսարան, գիտական գործուղման: Վերադարձել էր 2018-ի հունիսին, հավակնելով կրկին

ստանձնել ՀՑԹԻ տնօրենի պաշտոնը:

Այս տարվա հունիսի 26-ին, լրագրողների հետ զրուցում, ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանն ասել էր, որ դեռևս 2017 թվականի դեկտեմբեր ամսին որոշում է կայացվել՝ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հիմնադրամ դարձնելու մասին: Նշանակվել էր նաև հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար, որը պետք է ղեկավարեր թանգարան-ինստիտուտը՝ մինչև նոր տնօրենի ընտրությունները: